ԱՐԱՐԱՏԻ ՍՏՈՐՈՏԷՆ

Է.ԶՄԻԱԾՆԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ Է.ԶՄԻԱԾՆԷՆ

(12 Յունիս, 1959)

Ս. Էջմիածնի Մայր Տաճարի Աւագ Սեղանի վերակառուցման, ինչպէս նաեւ Ս. Հռիփսիմէի վանքի վերանորոգման առիթով Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիայի կողմից Ս. Սեղանի տակ եւ Ս. Հռիփսիմէի վանքում կատարուող պեղումները ներկայիս լրիւ աւարտած են:

Սոյն թուի Յունիսի 10ին Մայր Աթոռում հրաւիրուած հնագէտների յանձնաժողովը տեղում քննելով պեղման արդիւնքները, այլ եւ պեղման աշխատանքները ղեկավարող ճարտարապետ Ալ. Սահինեանի զեկուցումը, լրացուցիչ կերպով հաստատեց.

1. – Ե. դարում Վահան Մամիկոնեանի կողմից կառուցուած Աւագ Սեղանի կենտրոնում յայտնաբերուեց թոնրաձեւ մի կըրակարան, մէջը մոխիր: Յատկանշական է, որ Ե. դարի Վէմ քարը դրուած է եղել ուղիղ կրակարանի վրայ, որպիսի հանգամանք, հաւանաբար, հանդիսացել է հեթանոսական պաշտամունքի նկատմամբ քրիստոնէական կրօնի յաղթանակի խորհրդանշումը:

Պեղումների արդիւնքների հետագայ առաւել հանգամանօրէն մշակման ընթացքում կը պարզուի, թէ երբ է կառուցուել յիշեալ կրակարանը – քրիստոնէութիւնը Հայաստանում հռչակուելուց առա՞ջ, թէ Ե. դարի կէսերին, պարսկական կրօնը բռնի կերպով Հայաստանում մտցնելու փորձերի ժամանակ:

Վեհափառ Հայրապետի բարեհաճ համաձայնութեամբ որոշուեց կրակարանը, Ե. դարի Ս. Սեղանի ամբողջ կառուցուածքի հետ միասին, պահպանել ընդհանուր դիտման համար, իբրեւ պատմական յուշարձան:

2. – Ս. Հռիփսիմէի տաճարի նորոգութեան առթիւ Գիտութիւնների Ակադեմիայի կողմից տաճարի ներսում կատարուած մասնակի պեղումները պարզեցին հետեւեալը.

ա) Կոմիտաս Կաթողիկոսի կողմից 618 թ. կառուցուած տաճարի զմբէթակիր որմնամոյթերից երեքի տակ յայտնաբերուեցին առաւել հնագոյն չէնքի զարդաքանդակուած քիւի բեկորները (130×80×32 սմ.), որոնք յար եւ նման են Գառնիի հեթանոսական տաճարի (հելլենիստական) շրջանում տեղծուած մի խոշորագոյն (հաւանաբար պաշտամունքային) չէնքի, որը գտնուելիս է եղել Ս. Հռիփսիմէի տաճարի շրջապատում:

Այսպիսով Ս. Հռիփսիմէի տաճարում յայտնաբերուած այդ քարերը, Գառնի ամրոցի ճարտարապետական նշանաւոր յուշարձաններից յետոյ, Հայաստանի Հելլենիստական շրջանի ճարտարապետութեան մի նոր օճախի գոյութեան իրեղէն վկայութիւններն են:

բ) Տաճարի այժմեան յատակից 40 սմ. ցած յայտնաբերուեց չէնքի սկզբնական յատակը:

գ) Յայտնաբերուեց Ս. Հռիփսիմէի կոյսի դամբարանի սկզբնական մուտքի քարաշէն աստիճանը, որը դամբարանի հետ մէկտեղ, ամենայն հաւանականութեամբ հանդիսանում է Ս. Գրիգոր Լուսաւորչի ժամանակաշրջանի (301 թ.) գործ:

Վեհափառ Հայրապետի բարեհաճ համաձայնութեամբ, որոշուեց ինչպէս հեթանոսական շրջանի ճարտարապետական բեկորները, այնպէս էլ Ս. Հռիփսիմէի կոյսի դամբարանի սկզբնական մուտքի աստիճանը առնել ապակեպատ յատուկ յարմարանքի տակ:

ԽԱՉՔԱՐ ՄԸ

Է.ԶՄԻԱԾՆԷՆ Ս. ՂԱԶԱՐ

Էջմիածնի Վեհափառ Կաթողիկոսը խաչքար մը կը նուիրէ Ս. Ղազարու Թանգարանին. խաչքարը քանդակուած է Հայաստանի որձաքարի վրայ, հայ վարպետի ձեռքով, հայկական հին խաչքարներու ոճով (մեծութիւն 30×45,4 հրզմ.). ստորեւ կը կրէ Սբ. Էջմիածին ՌՆԹ արձանագրութիւնը:

Թեհրանարնակ Տիկ. Սիրարփի Զերչեանի ձեռքով՝ խաչքարը կը հասնի Միլան, Մայիսի կիսուն. կը մտնէ Ս. Ղազար, Յուլիս 5ին, Վարդավառի առաւօտը, Իտալահայ Մշակութային Միութեան նախագահ՝ բանաստեղծ Արամայիս Սրապեանի ձեռքով, որ կը յանձնէր դայն վանքին՝ պաշտօնական նամակով մը:

Երեք տարի առաջ, երբ Վեհ. Վազգէն Ա. Կաթողիկոս եկաւ Վենետիկ, մեր Թանգարանին նուիրեց Մարտիրոս Սարեանի մէկ փոքրիկ նկարը, որ կը պատկերացնէ Արարատը: Արարատը մեզի համար խորհրդանիշն է Հայաստանի փառքին. իսկ այս խաչքարը կ'ըլլայ խորհրդանիշ քրիստոնեայ ու մարտիրոս Հայաստանին: Արարատը կը մնայ կանգուն վկան մեր փառահեղ անցեալին, խաչքարը կը պատմէ փառքերը մեր կրօնասէր նախնիքներուն: Արարատը՝ խորհրդանիշ հայրենիքի. խաչքարը՝ խորհրդանիշ կրօնքի:

Եւ ի՜նչ գեղեցիկ զուգադիպութիւն. խաչքարը կը մտնէ Ս. Ղազար Վարդավառի առաւօտը: Վարդավառը տօնն է հայկական, կը յիշեցնէ մեր վարդապսակ նաւասարդները, «զվազելն եղանց եւ զվազելն եղջերուաց»: Իսկ մեր ծիսարանին մէջ, Վարդավառը տօնն է Քրիստոսի այլակերպութեան, երբ Քրիստոս, Թարոր լերան վրայ, լուսակերպ, իր խաչելութեան ու յարչարանքներուն վրայ կը խօսէր՝ երկնքէն իջած հինաւուրց մարգարէներուն հետ: Այսպէս փառքն ու խաչը, Վարդավառն ու խաչքարը մեզի համար կը դառնան աղբիւր անսպառ ոգեւորութեան, կրօնքի ու հայրենիքի ներշնչարան:

Ու հիմա այդ խաչքարը պիտի դան տեսնել աշխարհի ամէն կողմէն Ս. Ղազար դիմող հայ ուխտաւորներ, օտարազգի բազմահազար այցելուներ: Պիտի տեսնեն այնտեղ պատկերացած, խաչաքանդակին այդ պարզունակ գծերուն մէջ՝ հսկայ պատմութիւն մը, դարաւոր պատմութիւնը հայուն անցեալին եւ հայուն հաւատքին:

Մեր ջերմ շնորհակալութիւնը Վեհափառ Նուիրատուին, որուն յիշատակը պիտի արծարծէ միշտ այս խաչքարը սրբրազան:

ԽՄԲ.